

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 21 » փետրվար 2025թ. No 1049 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի, ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման կետ 170-ի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N EL/01/723-25 առ 17.02.2025թ. փորձագիտական եզրակացությունը,

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Եվրասիական տնտեսական միության գրանցման (միայն Հայաստանում կիրառման համար) ընթացակարգով գրանցել երաշխավորված 2 դեղը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղդյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ և ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման 180-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Ուժը կորցրած ճանաչել նախկինում գրանցված ԷՍՑԻՏԱՄ ԱՑԻՆՈ դեղահատեր թաղանթապատ 10մգ N 19495 և ԷՍՑԻՏԱՄ ԱՑԻՆՈ դեղահատեր թաղանթապատ 20մգ N 19496 դեղերի գրանցման հավաստագիրը համաձայն՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի:

5. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

6. Դեղի գրանցման ժամկետը սահմանվում է համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի, հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

 Recoverable Signature

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Եվրասիական տնտեսական միության գրանցման և փորձաքննության կանոններին դրայեի համապատասխանեցման (միայն Հայաստանում կիրառման համար)

ընթացակարգով գրանցված դեղերի ցանկ

ՀՀ	Առևտրային անվանումը	Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը	Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Բաց թողնման կարգավիճակը	Եզրակացության համար և ամսաթիվ
1	ԷՍՖԻՏԱՄ ԱՅԻՆՈ	Էսցիտալոպրամ (Էսցիտալոպրամի օքսալատ)	դեղահատեր թաղանթապատ	10ևգ; (30/3x10) բլիստերում, (60/6x10) բլիստերում	Ֆարմա Ստարտ ՍՊԸ, Բուվլար Վատսլավա Հավելա, 8, 03124, Կիև	Ուկրաինա	Ացինո Ուկրաինա ՍՊԸ, Բուվլար Վատսլավա Հավելա, 8, 03124, Կիև	Ուկրաինա	Դ	22727 (013389) 14.02.2025
2	ԷՍՖԻՏԱՄ ԱՅԻՆՈ	Էսցիտալոպրամ (Էսցիտալոպրամի օքսալատ)	դեղահատեր թաղանթապատ	20ևգ; (30/3x10) բլիստերում, (60/6x10) բլիստերում	Ֆարմա Ստարտ ՍՊԸ, Բուվլար Վատսլավա Հավելա, 8, 03124, Կիև	Ուկրաինա	Ացինո Ուկրաինա ՍՊԸ, Բուվլար Վատսլավա Հավելա, 8, 03124, Կիև	Ուկրաինա	Դ	22728 (013389) 14.02.2025